

ՊԱՐՏԱՆԻՔ
Տարեկան գին 8 ՄՃ.
10 ՄՃ.
Վեցամսեկ 4 ՄՃ.
3 ՄՃ.
Գումարները մեկ անգամի հա-
մար 3 դուրոշ, երկու անգամի հա-
մար 2 դուրոշ, առնչի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ:



ՊԱՏՄԱՆՔ

Գործ գացած լրագրաց ճանաչող
ձախքը խորագրով եւան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորագրի
— Տնօրէնին պիտի ուղարկուի, զառա-
ջիկա Սանտրքըրար շատուկի թիւ
198, Կորո խան, Մասիսի գրասեն-
եակի:
Ճանաչող ձախքը չզճարուած նա-
մակ չընդունուիր:

ԼՐԱԳՐԻՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՎՈՏԱՆԵՐՈՒՊՈՒՄ 6 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շարժած օրն հեռագրերը ծանու-
ցին տեղութեանց խորհրդոյն բա-
ցումը, բայց որովհետեւ վիճաբանու-
թիւնները դադարի պիտի մնան, դեռ
չենք կրնար գիտնալ թէ ինչ խնդ-
րոց վրայ խօսակցութիւն եղաւ: Օս-
մանեան երեսփոխանք անցեալ ուր-
բաժնի օր Պէրլին հասան և թագաժա-
ռանդ իշխանէն ընդունուեցան: Տէ-
րութեանց խորհուրդն իւր առջև
մեծ և ընդարձակ գործ մ'ունի,
բայց արդեօք իւր վիճաբանութիւն
ներն և հետևաբար ընելիք որոշում
ները պիտի կրնան խորագրութիւնը
հաստատել, տակաւին մութ կէտ մ'է
այս, որոյ վրայ այժմէն վստահութիւն
ները կատարեալ չեն: Ստորոգէ որ
Անգղիա և Ռուսիա երկար բանակ-
ցութիւններէ ետև համաձայնութեան
մը հասած կերելին, և քանի որ եր-
կու գլխաւոր հակառակորդը հաշ-
տակութեան ոգւով ի խորհուրդ կըմը-
նեն, յոյս կայ որ միայն կուտելու
փափաքով զիրար չեն թշնամաներ.
սակայն իրաւացի կասկածներ տուող
իրողութիւնը ներկայ վիճակն է, ուր
ամեն կողմ զինուորական պատրաս-
տութեանց շաղկապութիւն մը կը տես-
նուի. հրազենները կը դիզուին, և
Արևելեան խնդիրը գրեթէ ընդհա-
նուր սպառազինութեան մ'առիթ
կըլլայ: Աւստրիա նոյն իսկ տէրու-
թեանց խորհրդոյ մասնակցելու գնա-
ցած ժամանակ իւր պատրաստու-
թիւնները կը փութացնէ, և կըսուի
թէ հարիւր հարար զօրք ի գէն կո-
չած է: Ներկայ վիճակին մէկ մեծ
վտանգն է նաև կ. Պոլսոյ շրջակայքը
Ռուսական բանակին, Օսմանեան զօ-
րաց և Անգղիական նաւատորմին իրա-
րու մերձակայութիւնը: Զօրք, թըն-
դանօթ, հրացան, սուլին, զրահապատ
նաւեր, պատերազմական ամեն գոր-
ծիք դէմ առ դէմ կեցած հրամանի
միայն կ'սպասեն մահ և աւերում տե-
ղալու համար, և ասոնց մէջ տէրու-
թեանց խորհուրդ կը գումարի ժա-
մանակիս ամենէն չիտթ խնդիրները
լուծելու համար, խնդիրները՝ որք
բազմադիմի և բազմակերպ են, և
հնար չէ առանց միոյն կամ միւսին
չափուն դպչելու, առանց միոյն կամ
միւսին անձնասիրութիւնը վիրաւո-
րելու վերջացնել: Եթէ Անգլո-Ռու-
սական համաձայնութիւնը գոնէ գործ-
նական նշան մը ցուցնէր մայրաքա-
ղաքին շրջակայքներէ երկու տէրու-
թեանց զօրութիւնները մի և նոյն ժա-
մանակի մէջ հեռացնելու, խաղաղու-
թեան վրայ դուրսէ յոյսերը կատար-
եալ կըլլային, բայց երկու կողմը խա-
ղաղութեան վրայ մեծ վստահութիւն

մը ցուցնելով կառարկեն որ եթէ
խորհուրդները խորհրդի, իրենց ա-
ռաջուան դերքը դառնալ դժուարին
է, և այս պատճառաւ նախամեծար
կը համարին ո՛չ միայն ուր որ են հոն
մնալ, այլ և կարելի եղածին չափ
յառաջանալ: Մայրաքաղաքիս Ռու-
սական դեսպան Լոպանով իշխանն ան-
շուշտ Այսթէֆանովի սպայակոյտին
առաջարկութեամբ՝ Բ. Դուրէն խնդ-
րած է ստիպմամբ, և ըստ ոմանց
սպուռնալեօք, որ Շումուի և Վառ-
նայի ամրոցները Ռուսաց յանձնուին:
Ասոնք Ռուսաց բանակին հարորդակ
ցութիւններուն կ'սպառնան, և եթէ
բանակցութիւնները խորհրդի, Ռուսաց
յետս նահանջման գիծը կտրելու կըը-
նան խիստ աղէկ ծագայել: Ասկէ
զատ թէ և հիմա պատերազմ չիկնի,
նոյն օգտակարութիւնն ունին դարձ-
եալ սպագային համար, ուստի և Օս-
մանեան զօրաց ձեռք մնալը կարևոր
է թէ՛ Անգղիոյ և թէ՛ մանաւանդ Ա-
ւստրիոյ, որ իւր զինուորական գիւր-
քը սկիւրայած պիտի տեսնէ եթէ
Պուրթիոյ ամրոցները բոլորովին (ս-
մանեան զօրքէն պարզուին է. Դաշ-
նագրութիւնը կը տրամադրէ որ ա-
սոնք քակուին, բայց Բիլիմայի մէջ
տեսնուեցաւ որ յարմար դերք մ'ա-
ռաջին կարգի ամրոց ընելու համար
շատ ժամանակ պէտք չէ. ուստի
թօթիպէն զօրավորին Շումուի և
Վարնայի նման երկու կարևոր դերք
ձեռք ձգելու համար ըրած ստիպ-
ման պատճառը կրնայ հասկցուիլ:
Բ. Դուրէն չհաճեցաւ այս առաջար-
կութիւններն ընդունիլ, իրաւամբ
առարկելով թէ Շումուի և Վարնայի
շրջակայքը բազմաթիւ իսլամ ժողո-
վորքք կը գտնուին, զորս Պուրթա-
րիոյ ուրիշ կողմերուն նման Պուրթա-
րաց հարած անքին չենթարկելու հա-
մար՝ չկրնար Օսմանեան զօրքն ետ
քաշել: Իսլամք և Յիւք հաւատարա-
պէս կը գանգատին Պուրթարաց ան-
գլութիւններէ՝ և անյեանքներն
Յունաց Սիլոզոսին, այն է գրական
ընկերութեան կողմէն առ Անգղիոյ
դեսպան Սըր Լէյարտ ներկայացեալ
պաշտպանելով թրակիոյ վրայ, կը
պնդէր որ եթէ Պուրթաբուրուն հա-
րաւային կողմը Պուրթարոյ արուի,
Հելլենաց իրաւունքն ու շահերը կը
տիրէ Արևելից: Պուրթարք այս ամ-
բաստանութիւնները գործով չեն հեր-
քեր, քանզի ամենայն ինչ Պուրթար-
ցընելու կաշխատին, և ո՛չ միայն ֆի-
լիպէի հին անունն իսկ փոխելով Բլով-
տիլ գրին, այլ և իրենց կիրքը ֆե-
սերու դէմ անդամ բորբոքած է: Փի-
լիպէի մէջ մանր տղայոց գրուելը դըը-
ուած կարծիք գտականքն իսկ կը հա-
լածուին:

Տէրութեանց խորհուրդը Պուրթա-
րիոյ սահմաններուն խնդիրն ալ ուրիշ
բազմադիմի դժուարութեանց հետ
գորհացուցիչ կերպիւ լուծելու պիտի
աշխատի: Ասոնց մին պիտի ըլլայ նա
և Հայաստանի խնդիրն, որոյ վրայ
Անգղիոյ խորհրդարանին մէջ տեղի
ունեցած վիճաբանութեան նկատմամբ
Անգղիական լրագրաց խորհրդածու-
թիւններն յառաջ բերել հարկ կը հա-
մարինք:
Տէրութեանց կողմէն (պահպանողա-
կան թերթ) այսպէս կը խօսի.
«Հայք ևս խորհրդարանին մէջ
անյեալ գիշեր յիշուեցան տէրու-
թեանց մեծ խորհրդոյն առթիւ՝ որ
այնչափ յոյսեր և երկիւղներ կը յա-
րուցանէ: Բայց ինչպէս արտաքին գոր-
ծոց նախարարի օգնական Պ. Պըրք
նշանակեց, Հայոց խնդիրն Այսթէ-
ֆանովի դաշնայն քննութեան ժամա-
նակ անշուշտ ու չազրուութեան պիտի
առնուի: Այս խնդիրն Եփրատայ հով-
տին սահմաններն և վարչութեան ե-
ղանակն որոշելու մեծ խնդրոյն մասն
է: Հայաստանն աշխարհագրաբար
սահմանել դժուարին է, քանզի Հա-
յոց մէկ մեծ մասը կիլիկիոյ մէջ, և
հին Ալիս գետին եզրերը կը բնակի,
կամ Բարսիլոյ թրանսիլիանիոյ և Վա-
լաքիոյ մէջ յըրուած է: Եթէ Հայք կըը-
նան լաւագոյն վիճակ մ'ունենալ այս
է որ կողմատի ժողովրդոց նման չիու-
սանան, կամ այնպիսի ինքնօրինու-
թիւն մը չընդունին որ չկրնայ պաշտ-
պանուիլ: Բայց պէտք է որ ընդհա-
նուր և տեական խաղաղութեան բար-
եաց մասնակցին, բարեկարգութիւնը
վերանորոգի ընդ պաշտպանութեամբ
այն քաղաքակրթութեան որոյ հետ
առաւել յարակցութիւն ունին: Այս
խնդիրը տէրութեանց երեսփոխան-
ներուն առջև կեցած դժուարին գոր-
ծը կը ցուցնէ, քանզի յիշեալ երես-
փոխանք զանազան կողմերէ եկած
պահանջներն ու յիշատակագրերը
քննելու պիտի հարկադրին: Այսու-
ամենայն խեղճաս մարդիկ, որ
կրնք և ազգէ ըլլան, պէտք է յի-
շեն թէ դուրսուածը տէրութեանց
խորհուրդ մ'է, և ոչ հազարամեայ
երջանկութիւն երազող արանդաւո-
րաց ժողով մը, և թէ համայն աշխարհ
բարեկարգել անկարելի է՝ նոյն իսկ
ամենէն համբաւաւոր պետական մար-
դերէ կազմեալ խորհրդոյ մը: Ընդ-
հակառակն, անկեղծ և խոհեմ ոգի
մը պէտք է ամեն կողմէ այս մեծ գոր-
ծը դժուարացիչ կերպիւ ի գլուխ հա-
նելու համար, քանզի վերջին պատե-
րազին պատճառաւ վստահներն և հա-
նած դժուարութիւններն ու վտանգ-
ները խիստ մեծ և բազմաթիւ են:»
Իսկ Տէրութեան կողմէն (պահպանող
այսպէս կըսէ.
«Պ. Պըրք ծանոց լըր ձ. Բէնա-
ուէյի թէ Հայոց խնդիրը տէրու-

թեանց խորհրդոյն պիտի ներկայա-
նայ: Կրնանք ուրեմն կրկին յայտնել
մեր յոյսը թէ հին քրիստոնեայ ազգի
մը կրած հարստահարութեանց նիւ-
թական դարման պիտի տարուի: Պ.
կլատթօն իննետասներորդ դար ա-
նուն անգղիական հանդիսին մէջ հը-
րատարակած յօդուածով կարծիք կը
յայտնէ թէ տէրութեանց խորհուրդը
մեծ և չիտթ գործ մը պիտի ունե-
նայ, ուստի այս գործին տեսականու-
թիւնն ու ամբողջութիւնը տեղական
ազատութեան և հաստատուն հիմանց
վրայ դուրսէն միայն կախում պիտի
ունենայ: Եթէ կառավարութիւնը,
կըսէ Պ. կլատթօն, տէրութեանց
խորհրդոյն մէջ այսպիսի աշխարհա-
վարութիւն մ'ընդունի, մեր անյեալ
կարծեաց տարբերութիւնները այու-
մը տրամութեան պէս պիտի անհե-
տանան: Բայց կառավարութիւնը գեռ-
յոյս չտուաւ թէ այսպիսի ընդարձակ
և ազատական աշխարհագրութիւն
մը պիտի ընդունի. իւր ամենէն ազ-
մեկոյց կուսակիցներն իրմէ այս չեն
սպասեր: Պէրլին երեսփոխան զրկող
տէրութիւններէն միայն Անգղիա, ե-
թէ իւր պատուիրակներն իւր իրա-
կան շահերն և նպատակն հասկնան,
ամենէն աւելի անշահաւէր փառաք
պիտի ցուցնէ Արևելեան ժողովրդոց
երջանկութեան: Բայց այսպէս շարժե-
լու համար Լորա Պիքսֆիլդ պէտք
է ի բաց թողու տէրութեանց հաւա-
սարակչութեան դադարներն, և
մինչև դարդ իւր մերժած աշխարհա-
վարութիւնն ընդունի, զոր կառա-
վարութեան պաշտպանները թէ խոր-
հրդարանին մէջ և թէ՛ անկէ դուրս՝
անընդհատ պարսաւած են:»
Տէրութեան կողմէն (պահպանող
այսպէս կըսէ.
«Սէտանի մտղոն» այն
է Նաբոլէոն Գ. ի նման քաղաքական
բաղդակները մը կը կոչէ: «Չարմանք
չէ ուրեմն, կըսէ, որ Նաբոլէոն Գ. ի
նախկին հպատակները, Գաղղիոյ այժ-
մեան հանրապետական լրագրները,
ինչպէս են Ռէբիլլիք Ֆրանսէզ, Թան
և այլն, Լորա Պիքսֆիլդի աշխար-
հավարութեան վրայ սքանչանան, և
զայն դուրստեն: Բայց եթէ, կըսէ
Տէրութեան կողմէն, Լորա Պիքսֆիլդ Անգ-
ղիոյ տիրած ըլլար, ինչպէս որ քան
տարուան չափ Նաբոլէոն Գ. տիրեց
Գաղղիոյ, կարելի է հիմա մեք և ո՞
մեր Գաղղիոյն ընկերակցաց նման նը-
կատելիք ազգային պատեր: Բայց
մեք Անգղիացիք 200 տարիէ ի վեր
ազատութեան փորձառութիւն ու-
նինք, քառասուն տարիէ ի վեր կը
ճանչենք զԼորա Պիքսֆիլդ, և եր-
կու տարիէ ի վեր գիտենք անոր աշ-
խարհավարութեան ամենէն նոր ե-
ղանակները:»

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Փարիզ 13 յունիս . Պարսկաստանի անբուխեանց խորհրդը...

Լոնտոնի Պարսկական դեսպանն այս իրիկուն ճանաչելու համար...

Պերսիան լուր կուսան Քոնկորդոսանս արագրին թէ Անտարկի կոմսին...

Պերսիան 13 յունիս . Արևելեան խնդրոյն նկատմամբ տէրութեանց...

Լոնտոն 16 յունիս . Օպերիվը կը հաւատայ թէ Ռուսիոյ և Աւստրիոյ միջև...

Պերսիան 16 յունիս . Ռուսիա տրամադրութիւն ցոյց կուտայ...

Պետարասիոյ խնդրոյն մէջ ոչ մէկ տէրութիւն...

Փարիզ 18 յունիս . Ռուսազայէն յունիս 13 թուով հեռացիր մը...

Պերսիան 17 յունիս, առաւօտ . Տէրութեանց խորհրդոյ անդամաց իրարու...

Ար կարծուի որ այս խնդիրը Տէրութեանց...

Պերսիան 17 յունիս իրիկուն . Տէրութեանց խորհրդոյ այս աւուր նիստն...

Լոնտոն 17 յունիս, իրիկուն . Ռիչընտ Էնտ կորտոմի գուշար Լորտերուն...

Table with 2 columns: Թու. (Numbers) and Գում. (Totals) for the month of June.

Փարիզ 17 յունիս . Օսմ. Քուս. 43,73

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Բարձր Սֆֆիլիմ փաշան կիրակի առաւօտ...

Յետոյ Ն. Բարձր. թիւնը Բ. Դուռն ելլալով...

Սոյն խորհրդի մէջ խորհրդակցութեան նիւթ...

Պետութեան ճարտարագիտական ժողովոյ...

Կըտուի թէ շինութեան աշխատութիւնները...

Իղմիտի ծովախորշն սպասող Անգղիական նաւատարմին...

Թուրք իրադրոց խօսքին նայելով, Բուսթիլի մէջ...

Կիրիտի իլաւմ Բնակիչներէն երեք հազարի չափ...

Սարայի իւրաքանչեւ կը ընդունին որ Բիրստանեայթ...

Խոյնազ իրն սպառնալիս կը վերջանայ...

Կայսերական զօրաց ընդհանուր սպայակազմի...

դամ Ժամանակի Հայաստանի վրայ տեղացրական...

Անցեալին իւր ամառ էինք թէ Բ. Դուռն Պետական...

Այժմ կը լսենք թէ Բ. Դուռն Ալի Եֆէիզ պէյին...

Կըտուի թէ երէկ Այսթիֆանուր և Մաքրէօյի...

Այս զինուորական շարժմանց այլ և այլ մեկնումներ...

Հիւանդ և վիրաւոր խնամելու համար Սաքսոնիայ...

Կը հաւատեն թէ Անգլիական նաւատարմը...

Կարինէն գրուած նամակէ մը հետեւ այս շաբաթ...

Էրզրումի առաջադրուածը և այս կողմերը...

Ազիզի մարտիոցէն հազիւ 50 քայլ հեռի...

Նախորդ երեկոյն, փողոցէն անցնող 2 սպայից...

Բոլոր այս յամախօսի կրկնուած սպանութեանց...

յայտարարութիւն մ'ալ ձեռք անցուցեր են, որն որ...

Ռուսիականութեն սկսած է արդէն սոյն դաւադրութեան...

Միջոցէ մեծ դարին օղնական Միւսքի իշխանն...

Միւս կողմանէ Ռուսաց զինուորական ակումներուն...

Այժմ հոս ամենուն զիտցած բանն է թէ Իսմայիլ...

Բարեբաղդաբար թիֆոի համաճարակ հիւանդութիւնը...

Table with 2 columns: ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ (Constantinople) and ԵՍՉԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ (Yemen) with financial data.

Table with 2 columns: ԸՆԹԱՅԻ ԱՐՄԻՊՊՈՅ (Army) and Կ. ՊՈԼԻՍ 5 ԳՈՒՆԻՍ (Police) with financial data.

Table with 2 columns: ԱՆԿԵՆ ԻՐԱՍ (Ankara) and ԵՄԵՆԻՍ ԵՄԻՆԻ (Yemen) with financial data.

Ա. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Պերսիանէն առ Ս. Պատրիարքն հասած հեռագիրը...

Սահմանադրութեան տարեդարձի տօնը կիրակի...

Ս. Պատրիարք հայրն Հոգեգալտըստեան տօնին...

Ցաւալի է միայն որ Հիւանդանոցին զխմացի...

գիտաբար եղած էր, ծառ շատ չը
գտնուելով, և տեղն ալ նեղ գալով,
հանգիստտես ժողովուրդն արևուն
տաքէն նեղուեցաւ։ Ապա թէ ոչ,
աւելի ժողովուրդ կրնար մտնել հան-
գիտատեղին և աւելի արդիւնք գո-
յանալ։

Ահա ասիկ ազգային ժողովոյ վեր-
ջին նստին մէջ Մէրեմ-Գուլի Գա-
րութին էֆէնտիի և այլ քանի մ'ե-
րեստիսանաց հարցման Ս. Պատրի-
արք հօր տուած պատասխանը։

«Շնորհակալ եմ այն երեստի-
սան էֆէնտիներէն որ այս հարցումն
ուղղեցին ինձ։

«Այս պահուն իմ պատասխանա-
տուութիւնս շատ մեծ է և այդ պա-
տասխանատուութեան զգացումը զիս
կը խօսեցնէ ու կը լռեցնէ միանգա-
մայն։ Թող ազգս ալ այս իմ վիճակս
հասկնայ ու ներսդամիտ ըլլայ ինձ։

«Գիտեմ, երեստիսան էֆէնտի-
ներ, այն զգացումն որուն հոս
թարգման կը կանգնիք, ընդ հասնու
ազգին զգացումն է։ ոչ ոք ինծի
չախ գիտէ զայդ, զի ամեն օր ամեն
կողմէ հրաւեր ու պաշտանք կըն-
գունիմ, մանաւանդ մեր երեք մի-

թանէն աւելի Հայերէն՝ որ հայրենի
հողին վրայ ազգային գոյութիւնը
պահպան մինչև այսօր։ Եւ այդքան
ազերտանաց, ակնկալութեան ու եր-
կնալի ես պատասխան մը պարտա-
ւոր եմ այսօր։ այս պատասխանս է
ձեզի ու ՚ի ձեզ բարձր ազգին, ՍՊԱ-

ՍԵԼ ՅՈՒՍՈՎ։

«Հայոց խնդիրն իր արժանաւոր
կերպովը ներկայացած է թէ՛ Բ. Դը-
րան և թէ՛ Եւրոպական տէրու-
թեանց, Բ. Դուռն իր պաշտպանու-
թիւնը խոստացաւ, Եւրոպական տէ-
րութիւնք ամենքն ալ իրենց հա-
մակրութիւնը յայտնեցին, ու ամենէն
ալ խօսք առած եմ որ զեւսպանած ո-
ղովին մէջ նկատուած թեան պիտի
առնուի մեր ազգին վիճակն ալ, Հա-
տարակաց կարծիքն ալ այսօր Եւրո-
պոյի մէջ ո՛չ ևս անտարբեր է մեզի
համար։

«Այս թէ՛ քանտեսի դաշնագրութեան
մէջ մասնաւոր յօդուած մը կայ ար-
դէն Հայոց վերաբերեալ։ ամենք-
նիդ ալ գիտէք այդ յօդուածը։ Ա-
ռաջին անգամ է որ դաշնագրու-
թեան մը մէջ Հայոց և Հայաստանի
խօսքը կրկնուի։ Տարակոյն չունիմ որ
Եւրոպական մեծ դաշնագրութեան
մէջ որ պիտի կնքուի ՚ի Պէրլին, ան
յիշատակ չպիտի մնայ մեր ազգը։

«Այլ ի՞նչ պիտի ըլլայ այն կար-
գազութիւնն որ պիտի որոշուի մե-
զի համար։ Չայս չզիտեմ և ոչ թե-
րևս գիտեն տակալին այն քաղա-
քագէտք որ զայդ դաշնագրութիւնը
պիտի խմբագրեն։

«Իմ բարդ ջանքս այն է որ այն-
պիսի կարգադրութիւն մ'ըլլայ, որ ազ-
գին կեանքը գիտաբար շարունակ
միւս կողմէն ո՛չ ոք կրնայ ուրա-
նալ Հայ ազգին իրեն վիճակակից ազ-
գաց համար ըլլալիք կարգադրու-
թեանց մասնակցելու իրաւունքը կը
փութամ յաւելցնել որ ամենէն ա-
ռաջ Բ. Դուռը վկայած է ու կը վը-
կայէ մեր այս իրաւունքին։

«Վերջապէս, երեստիսան էֆէն-
տիներ, ձեռքս խղճիս վրայ դնելով
կը յայտարարեմ ազգիս թէ ինչ որ
կարելի էր աշխատիլ, խօսիլ, գրել,
ամենքը ըրինք. մեր պարտքն էր
մտնող մեր անձը և տկարութիւնը
ու ազգը միայն մտածել. մտացանք
մեր անձը ու ազգը միայն մտածե-
ցինք, ո՛չ թէ միայն ես, զի իմ է բո-
լոր պատասխանատուութիւնն՝ այլ ոչ
բարձր արդիւնք. զի առաջին օրէն
սկսայ դորձակցութեամբ իմ Սրբա-

զան եղբարցս, բոլոր եպիսկոպոսա-
կան գառուն որ ՚ի Պոլիս։ Այսօր իսկ
երկու եպիսկոպոսունք՝ մեր եկեղեց-
ւոյն ու ազգի երկիւրին պարծանք-
ները, յետ իւրաքանչիւրն իւր պա-
կան գանձան տէրութեանց քով
պաշտպանելու ազգին դատը, միա-
ցած են ՚ի Պէրլին միտքան աշխա-
տելու համար զեւսպանած ողովին քով։

«Ատուած մեր և անունը ջանքե-
րը պսակէ։ ՍՊԱՍԵԼՔ ԳՈՒՍՈՎ։»

ԹՂԹԱՅՈՒԹԻՆՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

10 մայիս 1873 ՚ի Բալու

«Թեազդիր Մասիս պատուական
լրագրոյ։

Այս օրերս Բալուի բոլոր վիճակին մէջ
արհաւիրքն տիրած է, ընչեւ և կենաց
այտնուածութիւնը չունիք, և անազար
խիստ ու ծանր հարստահարութեանց են-
թակայ ինչեւո՞ք այնպիսի գծնակ օրեր
կանցունենք, որ մեր ամենէն ծերունի-
ներն անգամ ժամանակին տեսած չունին։
Տեղուոյս իշխանութիւնն ալ տուրք արոց
վրայ բարեկրմ մեզնէ խտարար կը պա-
հանէ, որով շատ անկարող անձինք չը
կրնալով տոկալ՝ մտաբերած ենք թողու-
ածեանց ինչ և դաղով ՚ի Բուստաստան։
Այլ հայրենասէր մարդիկ չուզելով թո-
ղու իրենց տառապեալ հայրենիք, իրենց
չէնքեր, իրենց հարց իշխանութիւններ
և դերեպաններ, և վերջապէս իրենց
վանքեր և բոլոր հաստատութիւնք, տա-
կալին կիսամեծ վիճակի մէջ կեցած կը
յուսան միայն Աստուծոյ և հայրենասէր
անձանց օգնութեան։

Սակայն մոխանակ օգնութեան աւելի
ևս կը ծանրանան մեր վրայ բռնութիւնք
և հարստահարութիւնք, որով ժողովուր-
դը մոլորած չգիտէ թէ իր անտանելի
ցաւերն որով յայտնելով դարձան խղճ-
րէ, որ պիտի իւր այս արեւտայի վիճա-
կէն ազատէ, թէ և պատու և մարդկու-
թեան զգացում կրող անձինք միտ հր-
կած եմք և կը հակնիք մեր բարբարոս
դրացեաց վերայ և թոյլ չենք տար լեռ-
նական Քրդուն, որ քանի մ'անձանց
միութեամբ զմեզ կողպտէր, այլ մեր
արդէն Հայքս ինչպէս կարող եմք հազա-
րաւոր երուզակաց լոյսիբրու զիմադրել
և խուսափիլ բռնութիւններէ, քանի որ
նայն իսկ մեր տեղական կառավարու-
թիւնն անգամ անկարող է դուս։ Ահա
այս՝ և տեղուոյ իշխանութեան անկարու-
ղութեան խրատական փորձքը, մայիս
ամսոյ առաջին օրը, երբ Հալապ վիւղի
ժողովուրդը հարկահատուց ոտիկաններէ
անարեւելալ կամ փախած և կամ ստակ
դանելու յուսով այլուր դնացած էին,
կը յարձարին Հալապ վիւղի վրայ և կը-
կալին աւերել և կը զննել ստեղծ զիւր-
և որովհետեւ գրեթէ արու մարդ չէր մը-
նացեր զիւրին մէջ և կանանց մեծ մա-
սքն ալ գնացեր էին այդ ինքն և արտե-
րը աշխատութեան, լեռնականք իրենց
դէմ դոցուած դուռներ և միայն տարի-
քով կանայք գտնելով, գոմանս կը վերա-
ւորեն և դոց դուռներն ալ կորստելով
տանց մէջ կը խոսէին, և բոլոր կան կա-
րասիք և ամենայն ինչ աւարեցնել վիւղի,
սրերին մերկացնելով կը յարձարին այ-
գիներու և արտերու մէջ եղող կանանց
և մանկանց վերայ՝ զանոնք ալ կողպ-
տելու համար։ որոյ տեսարանը այցելը
տուր էր. կարծես թէ թէ՛ մեղքի զա-
րուն մէջ եմք. մայրը գործընտրելով և
իւր մանկիկը գրկելով բարբարոսին դէմ
իւր անձն և պատիւը պաշտպանելու հա-
մար անդէն գտնելով ինքզինք՝ լեռներու
կամ ձորերու մէջ թափառական, լալին
և ողբալին գատ ուրի ինչ կարող է ընել,
այլ վաղորդին ոչ մտքը կը խնայէ և ոչ ալ
մանկան, վերջապէս շատ կրնէր և հարս-
ներ վերստորեկն պիտի բարբարոսին մերկա-
ցնելով կը ձգեն կերթան։

Չարմանալին սա է որ մեզնէ դաւա-
զանի հարուածով տուրք հաւաքող ոտի-
կանք, այս եղելութեանց պարզ հանդի-
սատես ինչեւ գատ ուրիք ան մը չըրին-
մասն մնացած տուրքն այլ ևս հաւաքե-
լու անհնարութիւնը կառավարութեան
տեղեկագրելով երան գնացին, որոց ա-
հէն փախող մարդիկ իրենց տեղեւոր դաւ-

նալով, ուրիք բան չգտան տուններին,
բայց եթէ վիրաւորեալ կրնէր և մանկի-
ներ, մերձ ՚ի մահ հասած հարսներ, մերկ
աղջիկներ և կորուսեալ ընտանիք . . .
Ինչպէս նկարագրելով Բալուի լեռնակող-
ման գիւղերէնք ալ բոլոր անտանելի տա-
ռապանքը, որոնք Պարստանեան գերու-
թեան ծանր օրերու մէջ կապրին և մէկ
քանին ալ այրեացաւ որ կը միայն,
անգութ Քրդերու ձեռամբ։

«Թեազդիր, մեր թէ՛ Վ. կառավա-
րութեան, թէ՛ Օսմանեան ազգին և թէ՛
այն Քրդաց ինչ չարիք գործած ենք, ո-
րի՞ զնա հասուցիք ենք և մեր յանցան-
քն ի՞նչ է. տուրքերինս միտ օրինաւո-
րապէս տուած եմք աւելնողը, մեր այս
չքաւոր վիճակին մէջ անգամ մեր կահ
կարասիքը ծախելով զանապաւն նորանոր
տուրքեր տուինք, և միտ ալ աւելնու-
վրայ են աւանդ կարողութեան նայելու-
պատերազմի ատեն ձմերան խիստ եղա-
նակին մէջ անգամ մեր ընտանեաց բեր-
նին հացը կարելով մինչև կարին անձամբ
և անասուններով ցորեն վտնագրեցինք
բանակին համար։ Արեւմ մ'այս է եղըր
մեր այնքան աշխատանք և տառապա-
նաց փոխարէն. մ'այս է վարձատրութիւն
Օսմանեան կառավարութիւնը չենք գի-
տեր թէ ինչո՞ւ համար չպաշտպանել ըզ
մեզ լեռնական Քրդաց դէմ. ինչո՞ւ խիստ
միջոցներ ձեռք չառնել յանցաւորները
պատժելու և զմեզ ազատելու այն անո-
րէններէն, որոնք ոչ տուրք կուտան տէ-
րութեան և ոչ գինեւոր, և զմեզ հաւա-
տարիմ հպատակներս ալ անտանելի կեր-
պով կը շարչարեն, կը կողպտեն, կը յա-
փրջտակեն, կ'ապանեն, և վերջապէս ինչ
չարիք որ տատանային մաքնէ շանցիկը՝ ա-
տեք մեր զլիւսն կը թափեն ու անպա-
տիժ ալ կը մնան. չենք հասկնար թէ՛ ահ-
րութեան ակնկալելին ինչ է ասոնցմէ,
որ այսպէս համարձակ կը թողու ուզած-
նին ընելու։ Եթէ չուտով այս շարեաց
ստաճքը չառնուի, Բալուս դաւաւան անթղ-
քի ժամանակի մէջ աւերակ պիտի տես-
նուի և այն տեղ Հայութիւնն ունչացած,
որովհետեւ Քրդերուն անբնականութիւն և եր-
կի պէն հողագործութիւնն ալ խափան-
ւած ըլլալով սողն սկսած է զգալի ըլլալ,
և չորքոտանեաց ցաւն ալ վրայ դալով
սարսափելի կտորած կընէ անտանց, որ
հողագործին ապաւնն է։

«Թեազդիր, կը խնդրեմ որ բա-
րեհաճէք մեր պատուական թերթի էջը-
րուն մէջ մի անկիւն չնորոգ մեր նամա-
կին, որով շնորհապարտ կընէք զմեզ մեր
պաշտպանութեան։

(Մտաբար-թեան)

Եղեցին 7 մայիս 1873.

«Թեազդիր։

Ապրիլ 26 ին քաղաքիս Ակ-Գափու
ըսուած դրան դուրը պարտեցրերուն
միջև երկու արարացի մահմեդականք Հայ
երիտասարդի մը վրայ յարձակելով գտնի
թեկէն վիրաւորեցին։ Չարագործք դեռ
չեն ձերբակալուած։

Տիգրանակերտ քաղաքի Առկար Ե-
պիսկոպոս մը, իւր հետ ունենալով քա-
հանայ մը և քանի մ'աղաքականներ
հարիւր 28 ին քաղաքէկուս։ Ասոնք ա-
զատութիւն ստանալով իրենց հայրենիքը
կը վերադառնան։ Եպիսկոպոսան ապրիլ
29 ին իւր մարդոց ուղեկցութեամբ Հա-
յոց Մայր եկեղեցին ուխտի դալով Աւագ-
սեպանին բեմը ելաւ ու երկար ատեն
Վերմետանդ ունեւոր սոգովեց։ Եպիսկո-
պոսը՝ Պաղկարեան, Տաճկերէն ու Հա-
յերէն կը խօսէր։ Յիշեալ եպիսկոպոսան
վիթխորի հասակ մը, յաղթանգամ կազ-
մուածք մ'ուներ, նաև կը փայլէր անոր
դէմքին վրայ ուրախութեան ժպիտ մը,
զոր իւր «հայրենեաց փրկութեան» հա-
մար կը կրէր, ինչպէս կընէր ինքը։

Տեղուոյ Ասեմ. կառավարին ապրիլ
30 ին Պիլիճիկ ուղեկցեցաւ Բուսնիէն
եկած 500 և ըստ ամանց 500 տուն դաղ-
թականներն ընդունելու ու տեղաւորե-
լու համար։ Աստու թէ՛ այն գաղթա-
կանները Ձերքը կ են։ Եթէ ստուգ է և
բէկուան տուած տեղեկութիւնս, կառա-
վարութիւնը քաղաքիս Տաճիկ Մըքթար-
ներէն պահանջէր որ թաղի գլուխ քա-
նի մը տուն պարպեն՝ նորիկ գաղթա-

կանաց բնակութեան համար. և Մըք-
թարներն ալ ստոր դէմ առարկութիւն
ըրած ըլլալուն աւթիւ 12 ժամ բան-
տարկուեր են։ Չարմանալ չէ տեսնալ
որ ամենուրեք Ձերքը քաղթականաց
բնակութիւնը՝ Քրիտոնեայ ու Մահմե-
տական բնակչաց միանգամայն դժուար-
թիւն կը պատճառէ։ ըստ որում Ձերքը
ներուն Մահմեդականաց համար ալ վնա-
սակար ըլլալը շատ անգամ տեսնուած է։

Երկու օր առաջ տեղեկութիւն ստա-
ցայ որ Հիւսնիւմանուրի Առաջնորդ Սե-
ցի Աջապահեան Քեր. Գրիգորիս եպիս-
կոպոս վախճանելով մայիս 1-երկուշաբ-
թի օր յուզարկուորութեան արարողու-
թիւնը կատարուեր է։ Այն եպիսկոպոսն
2-5 անգամ քաղաքիս Առաջնորդական
պալատը վարած է։

Քաղաքիս Առաջնորդ. խնդրոյն համար
գրելու մտադիր էի, բայց այս անգամ
ժամանակը ինձ չունի։

Մնամ միտ Ձերք
Գեորգ Վ. Ուրեպան

ՆՈՐ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՇԱՀԷՆՆ ՚ի Սիփի
ԿԱՄ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅ
Գրեց Ս. Տէր Սարգիս

Կը ծախուի ամեն Հայ գրաւաճա-
ւաց քով։ Գին 2 1/2 Ֆրանկ։

ՀԱՄԱՌՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄԱԿԻՒՆ

ԳՐՈՅՑ ՀԱՄԱՐ
Հիւ գործութեան Աւելու ճորտերոց
ՄԱՍԵ Գ.

Յօրինեց Մ. Մամուրեան

Չմիւսնիս տպագրութիւն Տէպեան

Այս ընտիր և ամենակարեւոր դա-
սազընի Գ. մասն այն է Միլին Դա-
րու պատմութիւնը, որ 508 էրեսէ կը
բաղկանայ, աւարտած և Պոլիս հա-
սած ըլլալով կը ծախուի Եֆէն—ճա-
մի 2 իւլիանկիրէր ճատտէսի թիւ 2 Ս-
ղուկասեան գրատունը, և ուրիշ գը-
րաւաճաւաց քով։

Գին կազմեալ օրինակին 4 ֆր.

ՎԻՄԱՍՅՊ ՊԱՏԿԻՐ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԻՍԱՆԳԱՆՅԻ

Սոյն նշանաւոր հայրենասիրին մե-
ծագիր պատկերը, խիստ վայելուչ
և մաքուր գծուած կը ծախուի Յը-
ուէնկեան գրատունը և ամեն Հայ
գրաւաճաւաց քով, դիւրամատչելի
գնով։ Արժան է որ ամեն հայրենասէր
Հայ մի օրինակ առնու սոյն պատկե-
րէն։

Ի Լ Ա Ն

Էսմանը երևալու քայլմէ երևզ զը-
րուշա օլարաք վրիլմէր իւզրէ միւ-
պայեա օլունաճաք օլան օթուզ պին
քըլէ ըէթիմ սապօնընը պէհէր քը-
յէսի օն իքի դրո շա թալիլի էօհտէ-
սինտէ օլուպ հազիրանը ըուսինին եէ-
սինճի չէհարչէնալիս կիւնի իտարըը
դաթիլի վերիլէճէ յինտէն, և թատընա
թալիլ օլարաքըն եէվիմ մէգըլարե
Տարի Շուրայի աքքըլիէ կէվէլէրի։
3 Հազիրան 1878

Պապը Սէրուսքերի

Իդիա ֆապրիքայի հիւմայուն
թամիրալը իլուն լուզումի օլան քի-
րէճին մաղպութ օլան մուքալիլիսի
վէչ իլէ պէհէր քանթարը օն պու-
չուք դրուչ ֆիլիպը իլէ քրէհէճի Բա-
նայօթ էօհտէսինտէ օլուպ սայիլ թա-
լիլիսի գուհուր իյնէսիլի հալուէ էն
նիհայէ մահ Հալիս սէքիլինճի փէնչ-
չէնայիս կիւնի քարարը դաթիլի վի-
րիլէճէ յինտէն, Գապը Սէրուսքերիտէ
էպիլիլի տարիլիէ քօմիսիօնընա միւ-
րաճաթ իլէվէլէրի։

3 Հազիրան 1878

Պապը Սէրուսքերի

ՄԻՐԱՅ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

ԱՐԻ ՀՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՒՅԵՐ

ԳՐԵՑ ԻՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Եւ իւր ընծայեցին անուանեալ եղբարս Զոհաննէս և Մկրտիչ Էսաեան

Ի ՆՈՒԵԼ

ՀԱՅՈՑ ՀԱՐՑ ԵՒ ՁՅՐԳԱՏԵԱԼ ՈՐԴԻՈՑ

Կը ծախուի ամեն հայ գրավաճառաց քով գին մէկ քսաննոց թըղթող բաղամբ:

Շ Ի Թ Ք Մ Ս Ն Ո Ւ Ե Ւ Ք

Ի Ս Ի ՁՅՐԳԱՏԵԱԼ ԿԱՆԵՔ

Երկարութեայ Հմայեալ Ն. Վ. Գիւնարեան

Օճանդանդան

Եղբայրս Էրազմուս

Մայրաքաղաքէս մինչև ի գիւղտու և Երուսաղէմ 32 քաղաքաց և գիւղորէից վրայ վիճակագրական շահաւէտ տեղեկութիւններ պարունակող 368 երեսէ բաղկացեալ գիրք մ'է, Հայաստանեայց անուն տպարանէ մը ելած:

Կը ծախուի Եջնի գարուի և Մայր եկեղեցեաց բանկաչներն և Կ. Պոլսոյ Հայ գրավաճառաց քով Գին կէս արծաթ մէճիւրի:

Ո. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ր Ե Ի Ք

Քերթնառած, Մահ Ստիպարայ, Ճառած, Այլ և այլ, Յաստիւն:

Հեղինակն իւր ինչ ինչ ստանաւոր և արձակ գրուածներն և լամարդինի Գաղղիացի բանաստեղծին Ստիպարայ ճանուն գրարար տաղաչափեալ թարգմանութիւնն ամբողջած է սոյն գրքուկին մէջ:

Կը ծախուի Եջնի-ճամբ Զիլինկիւր ճատէսի թիւ 2, Ս. Ղ. և Եղբայր մանեան գրատունը, և ուրիշ գրութիւններն քով Գին 1 քսաննոց թըղթող:

ՄԱՐԻՈՆ ՏՐԼՈՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԵՐԸ

Կ Ա Ս

ՊԱՍՏԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

Հեղինակ Էօճէն ար Վրդուար Թարգմանչ Գր. Չիլինկիւր

Սոյն նշանաւոր վէպին հինգ երորդայն է վերջին հատորն ալ իրմիտի Տէստէան եղբարց տպարանէն Պոլսոյ հասած ըլլալով կը ծախուի Եջնի ճամբ Զիլինկիւր ճատէսի թիւ 2 Ս. Ղ. և Եղբայր մանեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով Գին 2 ֆրանք:

Թ Ո Ր Ո Ս Լ Ե Ի Ո Ւ Ի

ԿՐԵԱՑ ԾԻՐԵՆՑ

Սոյն գեղեցիկահիւս վիպասանութիւնէն որոյ պատմական աղբիւրը Բուքինեան հարստութիւնէն առնուած է, և որ Գրիգորի 1143 թուականին Հայոց կիլիկիոյ մէջ վերստին ձեռք բերած իշխանական մեծութեան ճշգրտատու պատկերն է, ամեն Հայ պէտք է վաճառուի մի օրինակ ունեւիւլ Կը ծախուի ամեն գրավաճառաց քով Գին 2 ֆրանք:

ԽՈՐՀՐԴԱՆՈՐ ԿՂԶԻ

ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԿԸ

Ժիւլ Վէրն անուանի հեղինակին սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործին Գ. այն է վերջին հատորն ալ իրմիտէն հասած ըլլալով, կը ծախուի Եջնի ճամբ Զիլինկիւր ճատէսի թիւ 2, Ս. Ղ. և Եղբայր մանեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով Գին 2 ֆրանք:


ԱՐԻՆԱԼԻ ՄԱՐԻՆՈՎՆԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

Տալ կամուսնի

Քարգմանեց ի. Կ. Պարունուզեան

Սոյն գեղեցիկ վիպասանութեան, որ միայն երկու հատորէ կը բաղկայնայ, երկորդ հատորն ալ իրմիտէն հասած ըլլալով, կը ծախուի Եջնի ճամբ Զիլինկիւր ճատէսի թիւ 2, Ս. Ղ. և Եղբայր մանեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով Գին 2 ֆրանք:



ՇԻՐԻՔԻ Ի Ս Ա Յ Ր Ի Կ Ի

ՇՈՂԵՆԱԻՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՅՈՒՆԻՍ 1 ՀԻՆԳՇԱՐԹԻ ՕՐԷՆ ՄԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՆ ԵՈՒՆԻՍ 30


ԲՈՍՓՈՐԷՆ Ի ՁՅՆՈՂ ՇՈՂԵՆԱԻՆԵՐԸ

Table with columns for names, dates, and prices. Includes entries like 'Եկեղեցեաց Վեպարայ', 'Ս. Ղ. և Եղբայր մանեան', etc.

Table with columns for names, dates, and prices. Includes entries like 'Արմաւուրէլ', 'Պէտքեր', 'Ս. Ղ. և Եղբայր մանեան', etc.



ԱՅԵՐԻ ՎԻՍՈՐԸ
Ով որ իր մազերուն թափիր չուգեր, և Այլերի վիշտը կուսում մազի անուշահոտ փութն գործածելու է...



ՕՃԱՆ
Միտ շահոտ օճառ, մորթիք կը կակողցնէ ու լեզի շարով ալ կը վերջապէս անուշիկ խիտ աղին ու գինը շատ աճան է...

Table with names and prices. Includes entries like 'Պէտքեր', 'Ս. Ղ. և Եղբայր մանեան', etc.

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՆՈՂ ՇՈՂԵՆԱԻՆԵՐԸ

Table with names and prices. Includes entries like 'Պէտքեր', 'Ս. Ղ. և Եղբայր մանեան', etc.

ԱՐՆԻՆՈՒ ԳԵՒԷ

Table with names and prices. Includes entries like 'Ուղղակի Արմաւուրէլ', 'Ս. Ղ. և Եղբայր մանեան', etc.

ԱՐՆԻՆՈՒ ԵՂԵՐԻ

Table with names and prices. Includes entries like 'Իսկ Կուր. Պէտքեր. Ս. Ղ. և Եղբայր մանեան', etc.

Այս քաղաքի շարժելու երեք անգամ զը հրատարակուի երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը, Բաժանորդագրուածեան տեղերն են Ղալաթիա Սանտրոքըրար ճատէսի թիւ 198, Ղօրօ խան Մասիսի խմբագրատունը:

Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հարցաբարձուց սենեակները:

- ԻՋՄԻՐ. Սահման աղա Տէտեան.
ՆԻՍՈՒՍԻՆԱ. Խոսրով էֆ. Էսկիճեան.
ՊՐՈՒՅՍ. Ստեփան աղա Թանկէրեան.
ԹԵՔԵՐՏԱՂ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Յիսկեան.
ՏՐԱՊԻՉՈՒՆ. Խաչատուր քաղաքացիական ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Չարսեան.
ՎԵՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄԱՏԵ. Մկրտիչ աղա Փոթիկեան.
ՍԱԸ. Մ. աղա Խաչիկեան.
ՅՈՒՏԱՆ. Ֆերիտ աղա Ս Յերհասեան.
ԵՐԶՆԿԱՅ. Թաղեալ աղա Բաղդասարեան.
ՍԻՎԻՍԻՆՍԻՐ. Սրբ. Ռուբէն.
ՍԵՐԻՅ. Զաղաքներէ սարագործի ուղղորդներն աւտ տեղերէն մէկուն հետ արձանի թղթակցիլ:

ԽՈՐՀՐԴԻՐ—ՏՆՈՐԷՆ
Կ. Ս. ԻՌԹԻՆՁԵԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՐԻՍ ԼՐԱԳՐՈՑ
ՀԱՆՈՒՄ ԵՐՈՐ ԽԱՆ